ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 1, 93-94

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ
(ծննդյան 100-ամյակին)
(1914 – 1999)

Լ.Ավագյան, Հայաստանի երկրաբանական ծառայության վաղ ժամանակաշրջանի վաստակաշատ նվիրյալներից մեկը, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի վաստակավոր երկրաբան:

Լ.Ավագյանը ծնվել է 1914թ. սեպտեմբերի 9-ին, Իգդիրում (Թուրքիա), ուսուցչի ընտանիքում: 1939թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և անցել աշխատանքի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես գիտաշխատող՝ ընդմիջելով աշխատանքը 1942-1943թթ., Սովետական բանակում ծառայելու ժամանակաշրջանում:

Հետագա տարիների նրա գիտական հետազոտությունները հիմնականում նվիրված էին Հայաստանի տարբեր շրջաններում տարածված չորրորդական հասակի առաջացումների շերտագրությանը և նրանցում գտնված խոշոր կաթնասունների՝ փղի, ռնգեղջյուրի, ձիու, ուղտի և այլ բրածո ֆաունայի մնացորդների ուսումնասիրության հարցերին: Առանձնակի հիշատակման են արժանի Շիրակի գոգավորության սահմաններում, «Կազաչի պոստ» տեղամասի ավազային շերտերում Լ.Ավագյանի կողմից հայտնաբերած նախապատմական փղի մնացորդների ուսումնասիրությունները, որոնք ամփոփվեցին և ներկայացվեցին թեկնածուական ատենախոսության տեսքով, որը պաշտպանվեց 1948թ.: Փղի ատամների և կմախքի որոշ ոսկորների մնացորդները Լ.Ավագյանի և քանդակագործ Հ.Պողոսյանի ջանքերով վերականգնվեցին և ամբողջական կմախքը ցուցադրվեց Երկրաբանական գիտությունների ինստիտուտի թանգարանային սրահում:

Թանգարանի ղեկավարի պաշտոնավարման տարիներին Լ.Ավագյանի գիտական գործունեության մի զգալի հատվածը նվիրված է եղել Հայաստանի ընդերքի հարստություններին վերաբերվող տեղեկությունները հանրությանը և, հատկապես, երիտասարդների լայն շրջանակներին մատչելի դարձնելուն: Զուգահեռաբար նա ձեռնամուխ էր եղել շատ կարևոր և շնորհակալ գործի՝ Հայաստանի երկրաբանական գիտության և ծառայության պատմության հարցերի ուսումնասիրմանը: Տարբեր տարիների լույս տեսած և նրա կողմից հավաքված, ինչպես նաև մեծաքանակ արխիվային նյութերի հիման վրա, հրատարակվել են հոդվածներ ու առանձին բրոշյուրներ, որոնք նվիրված են

հայ և օտարերկրյա անվանի երկրաբանների՝ Հ.Կարապետյանի, Տ.Զրբաշյանի, Պ.Ղամբարյանի, Պ.Բոննեի, Կ.Պաֆենհոլցի, Ա.Դեմյոխինի, Հ.Ստեփանյանի, Ս.Մկրտչյանի, Հ.Մաղաքյանի, Ա.Ասլանյանի և շատ ուրիշների կյանքին, գործունեությանն ու թողած մեծ ավանդին: Մասնավորապես՝ թանգարանի արխիվում պահվող ֆրանսիացի նշանավոր գիտնական Պ.Բոննեի ձեռագիր հաշվետվությունները և քարտեզագրական եզակի նյութերը, որոնք վերաբերվում են 1910-1914թթ. նրա կողմից Հայաստանում իրականացված երկրաբանական ուսումնասիրություններին, օգտագործվեցին 2010թ. Ֆրանսիայից հատուկ ժամանած մասնագետների կողմից: Նրանք հատուկ նշեցին, թե ինչ երախտագիտությամբ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում պահպանվել են Պ.Բոննեի շուրջ մեկ դար վաղեմության ձեռագիր նյութերը և ամբողջությամբ զետեղեցին դրանք գիտնականի 100-ամյակին նվիրված Ֆրանսիայում հրատարակված մենագրությունում:

Լ.Ավագյանի գրչին են պատկանում շուրջ 40 գիտական աշխատություններ: Նրա ջանքերով կազմվել և հրատարակման համար նախապատրաստվել էր մենագրություն՝ նվիրված ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետին և նրա շրջանավարտներին: Ցավոք, անավարտ մնաց նրա աշխատությունը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պատմությանը: Գիտական հետազոտություններից բացի, Լ.Ավագյանը զբաղվում էր գիտամանկավարժական գործունեությամբ: Երևանի պետական համալսարանի երկրաբանական և պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետների միջին սերնդի ուսանողները հնարավորություն են ունեցել ունկնդրել ընդհանուր երկրաբանություն և հնէաբանություն առարկաների դասախոսությունները, որոնք նրա կողմից մատուցվում էին գեղեցիկ հայերենով և միայն իրեն հատուկ արտիստականությամբ:

Լ.Ավագյանը վախճանվել է 1999թ. հուլիսի 21-ին, Երևանում:

Լևոն Ավետիսի Ավագյանի՝ կենսախինդ, շրջապատին արտակարգ հաղորդակից, համեստ, բարեկիրթ մարդու և ազնիվ քաղաքացու կերպարը վառ է բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն